

Տիրոջ Բեթանիա գալստեան, Ղազարոսի մահէն յետոյ  
(P. E. F. 1909, էջ 216):

### Է. ԵՐԻՔՈՎ ԵՒ ՅՈՐԳԱՆԱՆ

Երիքովի և Յորգանանի աւանդութիւնները յիշելէ առաջ, պիտի ստիպուինք յիշատակել եւ նկարագրել նոյն տեղերը տանող ճանապարհին վրայ գտնուած սրբաձայրերուն աւանդութիւնները, ըստ կարգին:

1. Բեթանիայի աւանդութիւնները. — Բեթանիա գիւղը կը գտնուի Ձիթենեաց լեռան արևելեան կողմը, քիչ մը դէպի հարաւ: Բեթանիա, ըստ Եւսեբիոսի՝ կը նշանակէ տուն սոյ, բայց աւելի ճիշդը տուն արուանեակաց (Պէյր Հիւնե). ըստ բացատրութեան Թալմուտի, այս այն գիւղն է ուր Յիսուս կը սիրէր բնակիլ, որովհետև հոն կ'ապրէին Մարթա, Մարիամ և Ղազար: Բեթանիա՝ Աւետարանին մէջ շատ կը յիշատակուի (Յովհ. ԺԱ. 12-30, ԺԲ. 1-10. Ղուկ. Ժ. 38-42, ԺԹ. 29, 44):

Բեթանիա Երուսաղէմէն 15 ասպարէզ հեռու էր (Յովհ. ԺԱ. 18): Հոն ցոյց կը տրուի Ղազարոսի գերեզմանը(\*): Պորտոյի անանուն ուխտաւորը կը գրէ թէ նոյն գերեզմանը Ձիթենեաց լեռնէն 1500 քայլ

(\*) 867 ին Բեռնարդոս աւանդութիւն մը կը յիշէ, ուս որում Ղազարոսի գերեզմանը Բեթանիոյ եկեղեցիին մէջ ըլլալով՝ անոր մօտ, ֆիւսիսային կողմը կար աւագան մը, որուն մէջ՝ Տիրոջը հրամանաւ Ղազարոս լուացուած է իր յարօթեցնէ վեց, ու քառասուն տարի Եփեսոսի եպիսկոպոսութիւնը վարած է (E. T. P. էջ 28-29):